

ՈՒՍՏԱՐԻ 2021-2022 / ANNÉE UNIVERSITAIRE 2021-2022

Փորձնական քննություններ/ Examens blancs

2-րդ կիսամյակ / 2ème semestre

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ / ARMÉNIEN

Քննության տևողությունը՝ 2.5 ժամ / Durée d'examen: 2.5 heures

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (11 միավոր)

1.1. առաջադրանքը գնահատվում է 9 միավորով: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,25 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 0,5 միավոր:

1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավորներով:

Առաջադրանք 2. (7 միավոր)

2.1. առաջադրանքի համար տրվում է 3 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

2.2. առաջադրանքների համար տրվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

Առաջադրանք 3. (8 միավոր)

3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 3-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

3.3. առաջադրանքը գնահատվում է 2 միավորով. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավորով:

Առաջադրանք 4. (8 միավոր)

4.1., 4.3 առաջադրանքները գնահատվում են 2-ական միավորով. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով: 4.2. առաջադրանքը գնահատվում է 4 միավորով. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

Առաջադրանք 5. (6 միավոր)

5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 2-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավորով: 5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավորով:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,25 միավոր:

Տարբերակ 2

1.1. Անհրաժեշտության դեպքում լրացնել տառերը և կետադրել բնագիրը (9 միավոր).

յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0, 25 միավոր, յուրաքանչյուր սխալ լրացված տառի կամ երկհնչյունի համար հանվում է 0, 5 միավոր):

Անդնդախոր կիրճում լսվում է Դեբեդի՝ երկինք հասնող միօրինակ ու թախծալի շառաչումը: Գետի ափին ուղղաձիգ բարձրանում են պղնձագույն ժայռերը՝ լերկ, սրածայր գագաթներով: Երբ հայացքդ զցում ես վիթխարի կմախքների նման երկինք մխրճված այդ քարածայռերին, անսովոր սարսուռ ես զգում. թվում է՝ ուր որ է կփլվեն դրանք և ահավոր բարձունքից կթափվեն ձորը՝ իրենց փլատակների տակ ծածկելով ամեն ինչ:

Չորընթաց նեղ ճանապարհով գնում ենք դեպի Մոտկոր՝ բնության հիասքանչ, անկրկնելի անկյուններից մեկը: Ճանապարհին զուգահեռ հոսում է սարերից իջնող Մարցա գետը: Խիտ, անանցանելի ու խավարչտին անտառներ կան Մոտկորում: Երբ նայում ես հաճառենիների կատարներին, գլխարկդ ընկնում է գլխիցդ: Ամեն քայլափոխին հանդիպում են լայնատերև թխկիները, երկարակյաց ընկուզենիները, որոնց սաղարթները մեղմորեն օրորվում են քամուց՝ անտառը լցնելով հուժկու շառաչումով: Փսած, արմատահան եղած ծառերի տեղում տարածվում են հատապտղի գաճաճ թփերը: Ամռանը թավուտներում քեզ աչքով են անում անտառի զարդը կազմող հատապտուղները՝ մորին, հաղարջը, մոշը, իսկ երփներանգ ծաղիկների(,) ուրցի ու դադի զգլխիչ բուրմունքը արբեցնում է մարդուն:

Մոտկորը բնական թանգարան է բաց երկնքի տակ. նրա բուսական ու կենդանական աշխարհը, ականակիտ աղբյուրները, պատմական հուշարձանները գրավում են մարդկանց: Դարեր առաջ անտառի տեղում տարածված է եղել Մոտկորի ընդարձակ բնակավայրը: Այդ են վկայում բացատում պահպանվող հինավուրց հիշատակարանները՝ վանքի ավերակներ, խաչքարեր, գերեզմանոցներ: Ավերակ վանքի մուտքի մոտ գեղեցիկ զարդանախշերով մի խաչքար կա, իսկ նրա կողքին՝ մի որձաքար՝ մաշված գրերով: Մամուկալած քարի վրա դժվարությամբ կարդում ենք հնօրյա երկաթագիրը. «Կառուցեցի այս վանքը՝ ի հիշատակ...»:

1.2. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բաղադրիչները գրվում են մեծատառով (1 միավոր):

- 1) ԻՎԱՆ ԱՀԵՂ, ՇՐԻ ԼԱՆԿԱ, ԳԱՐԵԳԻՆ ՆՇԴԵՆ, ՓՈՔԻ ԱՍԻԱ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
- 2) ԱՐՏԱՇԵՍ Ա ԲԱՐԻ, ՋԻԲԻԱԼԹԱՐԻ ՆԵՂՈՒՑ, ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՍ, ՀԱԿՈՒՐ

ՄԵՂԱՊԱՐՏ

3) ԹՈՒԹԱՆՀԱՄՈՆԻ ԴԱՄԲԱՐԱՆ, ՄԵԾ ՀԱՅՔ, ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ, ԿԱՐՄԻՐ ԾՈՎ

4) **ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ, ՏՐԴԱՏ ԵՐՐՈՐԴ, ՓՈՔՐ ԱՍԻԱ, ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

1.3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բաղադրիչները գրվում են միասին (1 միավոր):

1) հարյուր(քսան), հարավ(կորեական), նոր(խարբերոցի), փոխ(վարչապետ), վեր(ընթաց)

2) փոքր(ի)շատե, հուշ(ալբոմ), մեծից(փոքր), շուրջ(բոլորը), լեռնա(դահուկային)

3) **հարավ(ասիական), քարե(դարյան), օրն(ի)բուն, ափ(հանում), շին(հրապարակ)**

4) հինգ(տոկոսանոց), բառ(մասնիկ), հարավ(արևմուտք), քար(կոծել), ավար(առու)

2.1. Կազմել 6 բարդ բառ՝ սյունակներից ընտրելով մեկական արմատ (3 միավոր):

Արձակագիր	գարնանային	հերարձակ
համաստեղություն	հանդիպակաց	աստղագետ
թղթապանակ	անցուղարձ	անցաթուղթ
հեզասահ	դաշտային	սահադաշտ
խաղաշրջան	գլխակայան	հանդիպախաղ/շրջակա
շքամուտք	գանգրահեր	գարնանամուտ

2.2. Ընդգծել այն արմատները, որոնց կարող է ավելանալ –առ վերջածանցը (4 միավոր):

Մկրտել, խորաքնին, թերակատար, հանդամաս, ավազահատ, **քթ**ախոտ, սուրսայր, **հեղեղ**ահոս, **ծայր**եի**ծայր**, **կիս**ամյակ, գեղեցկատես, քաղաք**մեջ**, **թեր**ություն, հյուսիս**ափայլ**, **թև**ատարած, մանդակ:

3.1. Տրված բառաշարքից առանձնացնել հոմանիշների վեց զույգ (3 միավոր):

Բարդ, խորշակ, շեղջ, գլխանոց, խոյակ, սամում, սյունագլուխ, նավակ, սեպ, կնգուղ, մակույկ, գամ:

- բարդ-շեղջ**
- խորշակ-սամում**
- գլխանոց-կնգուղ**
- խոյակ-սյունագլուխ**
- նավակ-մակույկ**
- սեպ-գամ**

3.2. Տրված բառաշարքից առանձնացնել հակառակիչների վեց զույգ (3 միավոր):

Ողորկ, սեղմ, մշտնջենական, բեղուն, բռնազբոսիկ, խորը, խորդուբորդ, ճապաղ, անցողիկ, **ստերջ, բնական, ծանծաղ**, **ողորկ-խորդուբորդ**

**սեղմ-ճապաղ
մշտնջենական-անցողիկ
բեղուն-ստերջ
բռնազբոսիկ-բնական
խորը-ծանծաղ**

3.3. Ընտրել այն տարբերակները, որտեղ դարձվածքների իմաստները սխալ են բացատրված (2 միավոր):

1. գին ունենալ – արժևորվել, գլխահան անել – մոլորեցնել, գլխատակին փափուկ բարձ դնել – միամտացնել, գլխի գցել – բացահայտել

2. քարից հաց քամել – մեծ չարչարանքով ապրուստ հայթաթել, քարավան կտրել – թալանչիություն անել, քիթը բարձր – գոռոզ, քիթը կախ – ամաչկոտ

3. դեմքը կորցնել – ինքնուրույնությունը կորցնել, դեմքը մթնել – վշտանալ, փափուկ սիրտ – նրբազգաց, փեշի տակ առնել – մեկին հովանի լինել

4. թները թուլանալ – վհատվել, թները փռել – հովանավորել, ուշքի գալ – սթափվել, իրեն սպառել – հնանալ

5. ցանցը գցել – բռնել, ցավոտ հարց – անհետաձգելի լուծում պահանջող հարց, ցավոտ տեղին դիպչել – սրտամոտ խնդիր շոշափել, ցավոք սրտի – դժբախտաբար

6. տեղը չգտնել – սաստիկ շփոթվել, տեղի տալ – նահանջել, տեղիք տալ – առիթ տալ, տունը քանդել – մեծ վնաս հասցնել

4.1. Փակագծերում տրված բառերից ընտրել ճիշտը (2 միավոր):

ա) (Հանձին, **հանձինս**) իմ ուսուցիչների՝ ես ունեցել եմ խստապահանջ, բայց կամեցող բարեկամներ:

բ) Հարսանեկան արարողության ժամանակ ափսե կոտրելու այդ հին (**ավանդույթը**, ավանդությունը) աստիճանաբար դուրս է մղվում եվրոպական նորամուծությունների պատճառով:

գ) Զեկուցողը երկար-բարակ բացատրում էր այդ (**հասկացության**, հասկացողության) նշանակությունն ու կիրառության առանձնահատկությունները:

դ) Երկարատև հիվանդությունը հաղթահարած մայրն սկսեց որոշ բառեր (**թոթովել**, թոթվել):

4.2. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (4 միավոր):

Կայսրներ, **ի վնաս քեզ**, հարսեր, **խելքից դուրս**, միջանցքեր, **ինձ նման**, թոնել, **լուսանցքներ**, **առանց այդ**, բուժքույրներ, ազդանիշեր, **նրանք իրենք**, բացառությամբ տղայից, ոտնաձայններ, **սկանանետներ**, սառում եմ, փախնել, քո նման, վազացնել, պիտի փախնի, դուք ինքները, գովազդեր, լանջափոկներ, ծխանցքներ, չնայած հանգամանքներից, **մեզնից գատ:**

4.3. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասության մեջ՝ ըստ անհրաժեշտության ենթարկելով համապատասխան փոփոխությունների (2 միավոր):

1) Պատանին, **զգալով** ընկերոջ շփոթմունքը, օգնեց **բարձրացնելու** ծանր բեռը, սակայն **ընկրկեց՝** կնոջ **աղճատված** դեմքը տեսնելով:

(բարձրացնել, զգալ, աղճատել, ընկրկել)

5.1. Գտնել և ուղղել խնդրառության սխալները (2 միավոր).

1. Ձորքը հրաժարվել էր ապստամբների վրա կրակելու **ուց** և հեռացել էր:
2. Երբ ես բռնում էի նրա ձեռքը, նա իսկույն նեթ դադարում էր նյարդայնանալու **ուց**:
3. Ես ուրախ վերադառնում էի տուն, որովհետև հույս ունեի նրա հարսանիքում պարելու:
4. Ների՛ր նամակս ուշացնելու համար. ժամանակ չունեի քեզ գրելու:

5.2. Գտնել և ուղղել համաձայնության սխալները (2 միավոր).

1. Հիմնականները ձգվում է Արևելքի մի շարք պետություններով:
2. Ողջ ժողովուրդը ցնծությամբ ընդունեց իր արժանավոր գավակին:
3. Ինձնից՝ որպես փորձառու մասնագետ **ից**, միշտ ավելին են պահանջում:
4. Ամեն քար ու թուփ ծածկվել էին **էին էր** վաղորդյան թարմացնող եղյամով:

5.3. Ընտրել պարզ նախադասությունը բարդի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր).

Համերգի վերջում աճպարարը հանդիսատեսին ձանձրացնելու չափ կրկնեց իր գործադրած բոլոր հնարամտությունները:

ա. Համերգի վերջում աճպարարը հանդիսատեսին ձանձրացնելու չափ կրկնեց իր գործադրած բոլոր հնարամտությունները:

բ. Համերգի վերջում աճպարարը այնքան կրկնեց իր գործադրած բոլոր հնարամտությունները, որ հանդիսատեսին ձանձրացրեց:

գ. Համերգի վերջում աճպարարը այնքան ձանձրացրեց հանդիսատեսին, որ կրկնեց իր գործադրած բոլոր հնարամտությունները:

դ. Համերգի վերջում աճպարարը այնքան կրկնեց իր գործադրած բոլոր հնարամտությունները, մինչև հանդիսատեսը ձանձրացավ:

5.4. Ուղղակի խոսքը վերածել անուղղակիի (1 միավոր).

- Ես երբեք չեմ մոռանա Ձեր երախտիքը, - ասաց աշակերտն ուսուցչին և ավելացրեց, - Ձեր անունը միշտ կմնա իմ և իմ ընկերների շուրթերին:

ա) Աշակերտն ասաց ուսուցչին, որ երբեք չի մոռանա իր երախտիքը, և ավելացրեց, որ իր անունը միշտ կմնա նրա և նրա ընկերների շուրթերին:

բ) Աշակերտն ասաց ուսուցչին և ավելացրեց, որ երբեք չի մոռանա նրա երախտիքը, որ նրա անունը միշտ կմնա իր և իր ընկերների շուրթերին:

գ) Աշակերտն ասաց ուսուցչին, որ երբեք չի մոռանա նրա երախտիքը, և ավելացրեց, որ նրա անունը միշտ կմնա իր և իր ընկերների շուրթերին:

դ) Աշակերտն ասաց ուսուցչին, որ երբեք չի մոռանա նրա երախտիքը, և ավելացրեց, որ նրաանունը միշտ կմնա իր և նրա ընկերների շուրթերին:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ